

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ

ԾՐԱԳԻՐ

ԺԳ. 00. 02 «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԻԿԱ»

(հայոց լեզու)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հաստատվել է ակադ. Ա.Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 29.08.2011թ. նիստով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան իբրև գիտություն. նրա առարկան և խնդիրները: Նրա դերն ու նշանակությունը դասավանդման համար: Հայոց լեզվի մեթոդիկայի կապը այլ գիտությունների հետ (լեզվաբանություն, մանկավարժություն, հոգեբանություն, տրամաբանություն): Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Առաջավոր ուսուցիչների փորձի նշանակությունը լեզվի դասավանդման դրվածքի և մեթոդների բարելավման գործում:

Հայոց լեզվի դասավանդման ավանդական մեթոդները (ուսուցչի խոսք, զրույց, վերլուծություն, դասագրքերի և զննական պարագաների օգտագործում, էքսկուրսիա):

Դասը իբրև ուսումնական աշխատանքի կազմակերպման ձև: Դասի տեսակները (նոր նյութի հաղորդման, անցած նյութի ամրակայման և ընդհանրացման, համակցված և ամփոփիչ):

Ծրագրեր և դասագրքեր. ծրագրերի թեմատիկ պլանավորում, օրվա պլան – կոնսպեկտ՝ ըստ ԽԻԿ համակարգի:

Նորը դասավանդման մեթոդիկայում: Տեխնիկական միջոցների օգտագործում:

Ծրագրավորված ուսուցում: Աշակերտի դատողական կարողությունների զարգացումը լեզվի ուսուցման ընթացքում:

Խ.Աբովյանի մանկավարժական-քերականագիտական հայացքները: Ա.Ղարիբյանի մանկավարժական-քերականագիտական հայացքները:

Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, եղանակներ, վարժություններ (Վենի դիագրամ, Մտագրոհ, Խմբային հետազոտություն, ԳՈՒՍ, ԽԻԿ համակարգ, Շրջագայություն պատկերասրահում, Խճանկար, Ջրույց, Պրիզմա, Ձնագնդի, Քառաբաժան և այլն):

2. ԽՈՍՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Աշակերտի խոսքի զարգացումը: Աշակերտի թույլ տված լեզվական սխալների տեսակները և նրանց վերացման ուղիները: Աշակերտի խոսքի զարգացման ուղիները (գրական ընթերցանություն և շարադրություն, քերականության և բառագիտության դասավանդում):

Աշակերտի բառապաշարի հարստացումը գրավորների միջոցով:

Աշակերտի բառապաշարի հարստացումը բառակազմությունն ու ձևաբանությունն ուսուցանելիս: Աշակերտի բանավոր խոսքի զարգացման միջոցները (ուսուցչի խոսքի ընդօրինակում, գրական երկի բարձրաձայն ընթերցում, նկարի, դիաֆիլմի ու փոքրիկ կինոնկարի դիտում և բովանդակության վերարտադրում):

Գրավոր խոսք, գրավորների տեսակները (ուսուցողական և ստուգողական թելադրություն, շարադրություն, փոխադրություն):

Գրավորների սխալների խմբավորում, գնահատում: Գնահատման նոր չափանիշները: Աշակերտի աշխատանքն իր սխալների վրա:

Գրավոր աշխատանքների ուսուցման մեթոդիկան: Վարժությունների տեսակները և նրանց ուսուցման մեթոդիկան:

Թելադրության տեսակները. նրանց ուսուցման մեթոդական

Փոխադրության տեսակները. նրանց ուսուցման մեթոդական:

Շարադասության տեսակները. նրանց ուսուցման մեթոդական:

3. ՀԱՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հայերենի ձայնավորների ու բաղաձայնների ուսուցումը: Հայերենի ուղղագրության, ուղղախոսության, վանկի, շեշտի և հնչյունափոխության ուսուցումը:

Բառերի տեսակների ուսուցումն ըստ իմաստի և ձևի: Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստների ուսուցումը: Բարդություն, ածանցում. նրանց ուսուցման մեթոդիկան: Բարդության տեսակների ուսուցման մեթոդիկան. գծապատկերների օգտագործումն այդ նպատակով: Ժամանակակից հայերենի բառակազմական կաղապարների ուսուցումը: Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի ուսուցումն ըստ գործածության տարբեր ոլորտների:

Ժամանակակից հայոց լեզվի ոճական-գործառնական շերտերը. դրանց ուսուցման մեթոդիկան: Դարձվածքների ուսուցման մեթոդիկան:

4. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ընդհանուր գիտելիքներ: Ձևաբանության ուսուցում:

Հիմք և վերջավորություն. նրանց ուսուցումը, համեմատությունը արմատի և ածանցի հետ:

Գոյական անուն. նրա տեսակները, թվի, անձի և իրի առումների ուսուցումը:

Գոյականի հոլովների և հոլովումների ուսուցումը: Գոյականական անդամի լրացումների ուսուցումը:

Ածական անուն. նրա տեսակների, համեմատության աստիճանների (դրական, բաղդատական, գերադրական) ուսուցումը:

Թվական անուն. նրա տեսակների, կազմության, ուղղագրության ուսուցումը:

Դերանուն. նրա փոխարինման գործառնության, կիրառության, հոլովման ուսուցումը:

Բայ. ընդհանուր հարցեր: Դերբայների ուսուցումը: Եղանակային ձևերի ուսուցումը:

Անկանոն, ածանցավոր բայերի ուսուցումը:

Բայի սեռի ուսուցումը: Գծապատկերների օգտագործումը ուսուցման համար:

Բայական անդամի լրացումների ուսուցումը:

Մակբայի, նրա տեսակների, կիրառության և կազմության ուսուցումը:

Կապերի տեսակների ուսուցումը: Շաղկապների, ձայնարկության, վերաբերականի (եղանակավոր բառերի) ուսուցումը:

Խոսքիմասային փոխանցումների ուսուցումը:

Տարարժեք բառերի ուսուցման մեթոդիկան:

Պարզ նախադասություն. նրա տեսակների ուսուցումը:

Ստորոգյալի, նրա տեսակների ուսուցումը:

Կապակցության (առդրություն, խնդրառություն, համաձայնություն) ուսուցումը:

Դերբայական դարձվածի և նրա կետադրության ուսուցումը:

Բարդ նախադասության ուսուցումը: Բարդ համադասական նախադասության ուսուցումը:

Բարդ ստորադասական նախադասության ուսուցումը: Երկրորդական նախադասության բնույթի ուսուցումը: Ուսուցման ժամանակ զանազան գծապատկերների օգտագործումը: Շարահյուսական հոմանիշների ուսուցումը:

Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի ուսուցումը, նրանց փոխակերպման ուսուցումը:
Կետադրության ուսուցումը:
Տրոհվող լրացումների ուսուցումը:
Չայոց լեզվի և գրականության առարկայական հանձնաժողովը, նրա անելիքները: :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ. Աբովյան, Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950:
2. Ա. Եղոյան, Դերանվան ուսուցման մեթոդիկան միջնակարգ դպրոցում, Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2004:
3. Վ. Ավագյան, Բառագիտության ուսուցումը դպրոցում, Եր., 1989:
4. Պ. Բեդիրյան, Մայրենիի ուսուցման հարցեր, Եր., 1982:
5. Ս. Գյուլբուդաղյան, Չայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1978:
6. Ս. Թորգոմյան, Բայի բառաքերականական կարգերի ուսուցումը միջին դպրոցում, Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2010:
7. Ռ. Չարոթյունյան, Գոյականի բառաքերականական կարգերի ուսուցումը միջին դպրոցում որպէս սովորողների բառապաշարի հարստացման միջոց, Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2009:
8. Ա. Ղարիբյան, Չայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1954:
9. Մ. Միրունյան, Չոմանիշ, հականիշ և համանուն բառերի ուսուցումը որպէս խոսքի զարգացման միջոց, Եր., 2005:
10. Տ. Շահբաղյան, Չայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1956:
11. Թ. Զուհարյան, Չայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1978:
12. Ա. Վարդանյան, Գոյականի և ածականի խոսքիմասային տարարժեքությունը և նրա ուսուցումը բուհական համակարգում, Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2008:

ԱՎԱԴ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԱՆՎ. ՉԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ
ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

(Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ)